ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 6837.1 մլն դրամ՝ պլանավորված 6500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 5.2 տոկոսով կամ 337.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 7.2 տոկոսով կամ 460.7 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 221 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 10 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 30 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 52.0 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 10 ստուգում՝ 50.9 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման 6, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 5, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 3 ու ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 86 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 58-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 12-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 7-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման և 9 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 8 հայցադիմում՝ 120.0 հազ. դրամ գումարով, պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ 1 հայցադիմում՝ 9.0 մլն դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել են

բռնագանձման հայցերով 1 գործ՝ 236.4 մլն դրամ գումարով, վճարման կարգադրության հայցերով 7 գործ՝ 465.0 հազ. դրամ գումարով և 1 սնանկության գործ՝ 3.8 մլն դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 86 վարչական գործով սահմանվել է 1.3 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7209 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6662:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 78 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 134 վարձու աշխատողի՝ 21.5 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 56 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

«Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ փետրվար ամսում հարկ վճարողների հետ կնքվել են թվով 574 պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության և Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի նախագիծը:

Փետրվարի 5-ին կայացել է ֆինանսների նախարարության տարեկան հաշվետու ժողովը, որի ընթացքում ամփոփվել են նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2018 թվականին կատարված աշխատանքներն ու նախանշվել 2019 թվականի անելիքները:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ ֆինանսների նախարարի և պետական եկամուտների կոմիտեի նախագահի հետ, որոնց ընթացքում քննարկվել են Արցախի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, ինչպես նաև կառույցների համագործակցությանն առնչվող հարցեր: Նախարարության մեկ աշխատակից մասնակցել է ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից օպերատիվ-հետախուզության ստորաբաժանման աշխատակիցների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակում հաշվետու ամսում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում տարեսկզբից կատարված փոփոխությունները հարկ վճարողների կողմից ճիշտ ընկալելու ու գործնականում լիարժեք կիրառելու նպատակով ԱՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի հունվարի 23-ի N 23 հրամանի համաձայն՝ փետրվարի 6-ից մինչև 11-ը սեմինար-խորհրդակցություններ են անցկացվել Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության բոլոր շրջաններում, որոնց մասնակցել են 1012 հարկ վճարողների ներկայացուցիչներ:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 1868 տեղեկանք:

Հաշվետու ամսում հարկային մարմին է մուտքագրվել 170, ելքագրվել՝ 104 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 7 գրություն, որից 2-ը՝ էլեկտրոնային եղանակով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**